Հավելված N 2
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի 29-ի
N 481-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գործարար միջավայրի և մրցակցության պաշտպանության քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որն իր իրավասությունների շրջանակներում ապահովում է նախարարությանը օրենքով և այլ իրավական ակտերով վերապահված խնդիրների և գործառույթների իրականացումը:

2. Վարչությունն իր իրավասությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում իր վրա դրված խնդիրների և գործառույթների ժամանակին և պատշաճ կատարման համար:

3. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Նախարարության և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի (այսուհետ՝ նախարար) և նախարարության գլխավոր քարտուղարի հրամաններով:

4. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի

ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների մշակման բնագավառում վարչության խնդիրներն են՝

1) Միջազգային մակարդակով մրցունակ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում՝ հաշվի առնելով լավագույն միջազգային փորձը.

2) Իրավական ակտերի մշակման գործընթացում կարգավորման ազդեցության գնահատման ապահովում,

3) Ներքին առևտրի համար բարենպաստ միջավայրի ապահովում,

4) Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության մշակում, տնտեսական մրցակցության զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերհանում և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում,

5) Գործարար ու ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից՝ մասնակցություն հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանմանը, քաղաքականության մշակմանը և առաջարկությունների ներկայացմանը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունը իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում և դիտանցում է գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությունը.

2) մշակում և իրականացնում է գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ.

3) առաջարկություններ է ներկայացնում գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը խոչընդոտող խնդիրների վերացման ուղղությամբ.

4) ուսումնասիրում է «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային զեկույցով գնահատվող ոլորտները և առաջարկություններ է ներկայացնում առկա ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ.

5) մշակում է առաջարկություններ կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման ուղղությամբ.

6) իրականացնում է տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքներ.

7) ապահովում է հետադարձ կապ գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ իրականացնում է իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումներ վերջինիս հետ.

8) ապահովում և համակարգում է գործարար միջավայրին առնչվող խնդիրների թեժ գծի աշխատանքը.

9) մշակում է տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականությունը.

10) մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներքին շուկայի զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումներ.

11) մշակում և ներդնում է ապրանքային շուկայի մասնակիցների (արտադրող, մեծածախ առևտրի և այլ միջնորդ կազմակերպություններ, մանրածախ առևտրի կազմակերպություններ և սպառողների կազմակերպություններ) զարգացման, համագործակցության համակարգեր.

12) մշակում և ներդնում է կենցաղային ծառայությունների ոլորտը կարգավորող մեխանիզմներ.

13) ուսումնասիրում է ներքին շուկաները, բացահայտում առկա խոչընդոտները, մշակում է ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականությունը և իրականացնում դիտանցում.

14) նախապատրաստում է Նախարարության կողմից տրվող համաձայնության եզրակացություն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության

նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը փոխանցված՝ բռնագրավված, դատարանի վճռով հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած այլ գույքը ոչնչացնելու, շրջանառությունից հանելու, կամ որպես երկրորդական հումք օգտագործելու նպատակահարմարության մասին.

15) իրականացնում է ծանուցումներ գործարար համայնքին իրականացված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ.

16) իր իրավասությունների սահմաններում մասնակցում է պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ միջազգային վարկային ծրագրերի մշակմանը և իրականացմանը.

17) իր իրավասությունների սահմաններում համագործակցում է պետական և միջազգային կառույցների հետ.

18) իրականացնում է հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքներ.

19) Ուսումնասիրում է ներքին շուկայում սպառողների շահերի պաշտպանությանը խոչընդոտող խնդիրները, և ներկայացնում է առաջարկություններ դրանց վերացման ուղղությամբ.

20) վարչությունը կարող է իրականացնել իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում և փոփոխում է նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

8. Վարչությունը՝

1) իր իրավասությունների շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ

նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ.

2) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների համագործակցությամբ, նախապատրաստում է վարչության գործունեության ոլորտներին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրին համապատասխան, ներկայացնում է հաստատման վարչության ծրագրերը, ինչպես նաև ապահովում է դրանց կատարումը.

9. Վարչության աշխատանքների ղեկավարումը իրականացվում է վարչության պետի կողմից:

10. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից՝

1) Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման բաժին,

2) Ներքին առևտրի և մրցակցության բաժնին:

11. Վարչության պետը՝

1) իրականացնում է իր պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունները:

2) կատարում է նախարարի, նախարարության գլխավոր քարտուղարի կողմից իրենց լիազորությունների սահմաններում տրված հանձնարարականները:

3) պատասխանատու է վարչությունում համապատասխան աշխատանքային մթնոլորտի և կարգապահության ապահովման, վարչությունում աշխատակիցների միջև աշխատանքների հավասարաչափ բաշխման և դրանց կատարման համար.

4) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրած գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում է այդ աշխատանքների կատարումը.

5) անմիջական հաշվետու է նախարարին,:

12. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի պետ-վարչության պետի տեղակալը կամ բաժնի պետը՝ վարչության պետի ներկայացմամբ:

13. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինող համապատասխան բաժնի պետի կողմից:

14. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովների աշխատանքային խմբերում:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

15. Վարչության գործարար և ներդրումային միջավայրի բարելավման բաժնի գործառույթներն են՝

1) մշակում և դիտանցում է գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությունը.

2) մշակում և իրականացնում է գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ.

3) առաջարկություններ է ներկայացնում գործարար միջավայրի բարելավմանը խոչընդոտող խնդիրների վերացման ուղղությամբ

4) ուսումնասիրում է «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային զեկույցով գնահատվող ոլորտները և առաջարկություններ է ներկայացնում առկա ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ.

5) մշակում է առաջարկություններ կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման ուղղությամբ.

6) իրականացնում է տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքներ.

7) ապահովում է հետադարձ կապ գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ իրականացնում է իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումներ վերջինիս հետ.

8) ապահովում և համակարգում է գործարար միջավայրին առնչվող խնդիրների թեժ գծի աշխատանքը.

9) իրականացնում է ծանուցումներ գործարար համայնքին իրականացված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ.

10) իր իրավասությունների սահմաններում մասնակցում է պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ միջազգային վարկային ծրագրերի մշակմանը և իրականացմանը.

11) իր իրավասությունների սահմաններում համագործակցում է պետական և միջազգային կառույցների հետ.

12) իրականացնում է հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքներ.

16. Վարչության ներքին առևտրի և մրցակցության բաժնի գործառույթներն են՝

1) մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներքին շուկայի զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումներ,

2) մշակում է տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականությունը.

3) մշակում և ներդնում է ապրանքային շուկայի մասնակիցների (արտադրող, մեծածախ առևտրի և այլ միջնորդ կազմակերպություններ, մանրածախ առևտրի կազմակերպություններ և սպառողների կազմակերպություններ) զարգացման, համագործակցության համակարգեր,

4) մշակում և ներդնում է կենցաղային ծառայությունների ոլորտը կարգավորող մեխանիզմներ,

5) ուսումնասիրում է ներքին շուկաները, բացահայտում առկա խոչընդոտները, մշակում է ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականությունը և իրականացնում դիտանցում,

6) նախապատրաստում է նախարարության կողմից տրվող համաձայնության եզրակացություն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը փոխանցված՝ բռնագրավված, դատարանի վճռով հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած այլ գույքը ոչնչացնելու, շրջանառությունից հանելու, կամ որպես երկրորդական հումք օգտագործելու նպատակահարմարության մասին,

7) Ուսումնասիրում է ներքին շուկայում սպառողների շահերի պաշտպանությանը խոչընդոտող խնդիրները, և ներկայացնում է առաջարկություններ դրանց վերացման ուղղությամբ.

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

17. Վարչության ներքին ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպումը և ղեկավարումը իրականացվում է բաժնի պետերի կողմից:

18. Բաժնի պետը՝

1) իրականացնում է բաժնի աշխատանքների կազմակերպումը և ընդհանուր ղեկավարումը.

2) պատասխանատու է բաժնում համապատասխան աշխատանքային մթնոլորտի և կարգապահության ապահովման, բաժնում աշխատողների միջև աշխատանքների հավասարաչափ բաշխման և դրանց կատարման համար.

3) բացահայտում, վերլուծում և գնահատում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է սռեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը.

4) անմիջականորեն ենթակա և հաշվետու է վարչության պետին.

5) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է բաժնի ընթացիկ գործունեությունը.

6) կատարում է վարչության պետի հանձնարարականները.

7) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև վարչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: